# ՏԱՇԻՐ ԳԱՎԱՌԸ 1728 Թ. ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿՈՒՄ

ԳԵՈՐԳԻ ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

*Ռուսական և Օսմանյան կայսրությունների միջև 1724 թ. հունիսի 12-ին ստորագրված պայմանագիրը թույլ տվեց սուլթանական բանակին՝ ի թիվս Քերմանշահի ու Ատրպատականի, գրավելու նաև Այսրկովկասը[1]: 1724 թ. սեպտեմբերին գրավելով Երևանը[2]՝ օսմանցիները զարգացրեցին իրենց հաջողությունը և հնարավորինս սեղմ ժամկետում տիրացան պայմանագրով նախատեսված շրջաններին:*

*Օսմանյան իշխանությունները, իրենց նվաճողական գործողություններին զուգընթաց, որպես կանոն իրականացրել են գրավյալ շրջանների աշխարհագիր, այն է՝ նվաճված տարածքի բոլոր հարկատուների հաշվառում, բնակավայրի տնտեսության գրանցում, համապատասխան հարկադրույքների սահմանում և այլն: Նվաճված շրջանների մեջ է մտել նաև Տաշիրը, որը 1728 թ. օսմանյան հարկացուցակում եղել է նահիե[3] և պատկանել է Թիֆլիսի վիլայեթին:*

*Մինչ Տաշիր գավառի 1728 թ. օսմանյան հարկացուցակը ներկայացնելը, նախ հարկ ենք համարում տալ գավառի աշխարհագրական դիրքին առնչվող որոշ տեղեկություններ: Այդ առումով օգտագործել ենք Վրաց թագավոր Վախթանգ 6-րդի որդի՝ արքայազն Վախուշտիի կազմած քարտեզը[4], որը հեղինակել է մինչև օսմանյան արշավանքը երկրամաս: Ըստ քարտեզի տվյալների՝ XVIII դարում Տաշիրը հյուսիսում հարել է Դբանիսի կիրճին, հյուսիս-արևելքում՝ Սոմխեթի վարչական միավորին, հարավ-արևելքում՝ Սանահնի և Հաղպատի վանքերին, հարավում՝ Բերդուջի կամ Դեբեդ գետին (որն էլ իր հերթին հարավում սահմանակցել է Փամբակին), արևմուտքում՝ Աշոցքին սահմանակից Քարաքաջի լեռներին:*

*Տաշիր գավառի խնդրո առարկա հարկացուցակը կարևոր սկզբնաղբյուր է տարածաշրջանի ժողովրդագրության և սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրման համար: Վրաց հետազոտողների՝ Մերգի Ջիքիայի և Նոդար Շեն-*

---

[1] Армяно-русские отношения в первой трети XVIII века, сборник документов, т. II, ч. I. Ереван, 1964, с. LXXV.

[2] *Ա. Մ. Այվազյան. Երևանի 1724 թ. պաշտպանության ժամանակագրության մասին.– ՊԲՀ, 1991, № 1, էջ 93–100:*

[3] *Վարչական փոքր միավոր, գավառ:*

[4] Л. Маруашвили. Вахушти Багратиони, его предшественники и современники. М., 1956, карта вкладыш из Второго (1742–1743) атласа Вахушти, «Карта Картли к югу от реки Куры».

*գելիայի կողմից մեծ ծավալի աշխատանք է տարվել թարգմանելու 1728 թ. օսմանյան իշխանությունների կազմած Թիֆլիսի վիլայեթի հանգամանալից աշխարհագիր-ցուցակները[5]: Այդ երկհատոր աշխատությունը հրատարակվել է Թիֆլիսում, որն ընդգրկում է Արևելյան Հայաստանի մի շարք երկրամասեր, որոնց թվում է Տաշիրի աշխարհագիրը: Հարկ է փաստել, որ վրացերեն թարգմանությանը հաջորդում է օսմաներեն բնագիր տեքստի պատճեն[6]: Այն թույլ է տալիս հարկ եղած դեպքում համադրության շնորհիվ կատարել որոշ ճշգրտումներ:*

*Տաշիր գավառի հարկացուցակից, որը զետեղված է գրքի երկրորդ հատորում[7], պարզ է դառնում բնակչության տեղաբաշխվածությունը, բնակավայրերի ու հարկատուների քանակը, ազգաբնակչության էթնիկ կազմը, գյուղերից գանձվող հարկերը և այլն:*

*Գավառի աշխարհագիրն ունեցել է հետևյալ հերթականությունը. հարկացուցակում նախ նշվում է գյուղի անունը, ապա՝ գյուղացիների անուն-հայրանունները, հարկատուների ընդհանուր թիվը, այնուհետև՝ հարկատեսակներն իրենց փողային արժեքով և հարկաչափերի ընդհանուր գումարը:*

*Ըստ աշխարհագրի՝ Տաշիր գավառին է պատկանել 46 գյուղ, որից 29-ը բնակեցված չէր: Բնակչության թվով պայմանավորված գավառի ամենամեծ գյուղը Քարաքիլիսեն էր, որն ունեցել է 28 հարկատու, 15 տուն: Մյուս բոլոր 17 բնակեցված գյուղերը համեմատաբար ավելի փոքր էին և ունեին 2-ից մինչև 25 հարկատու[8]: Կարող ենք եզրակացնել, որ գյուղերը, ընդհանուր առմամբ, չեն ունեցել մեծաքանակ բնակչություն: Ինչ վերաբերում է բնակավայրերի դատարկվելուն, ապա դրա հստակ պատճառների մասին խոսելը բարդ է, քանի որ դեռևս չունենք ստույգ վկայություններ: Սակայն շատ հավանական է, որ օսմանցիների ներխուժման հետևանքով գյուղացիները լքել են իրենց բնակավայրերը:*

*Ի դեպ, Տաշիր գավառի հարկացուցակն ուսումնասիրելիս, սկզբնապես կարելի է հաշվել 44 գյուղ, սակայն անցում կատարելով Փամբակ գավառի 1728 թ. օսմանյան հարկացուցակին՝ պարզ դարձավ, որ Տաշիրին պատկանող 46 գյուղից 2-ը՝ Հակոբլու (օսմաներեն բնագրում՝ Յաղուբլու) և Վարդանան (օսմաներեն բնագրում՝*

---

[5] *1728* ՝ թվականի թիֆլիսի վիլայեթի դիվան դավթարի. ոսմալուրի տեքստ քարտուղարի թարգմանությամբ, ներածությամբ, գրաֆիկական ներածությամբ և ֆակսիմիլներով հրատարակեցին Սերգո Ջիքիանը և Նոդար Շենգելիան. Թբիլիսի: Հորոսի *XXI, 2009-2010 (այսուհետև՝ 1728* թվականի թիֆլիսի վիլայեթի դիվան դավթարի*).*

[6] *Նույն տեղում, հ. 1, էջ 564–829, հ. 2, էջ 464–724:*

[7] *Նույն տեղում, հ. 2, էջ 658–664:*

[8] *Հարկատուների թվով երկրորդ մեծ գյուղը Քաթերլին էր (25 հարկատու, 14 տուն), երրորդը՝ Դուլբենդլուն (22 հարկատու, 8 տուն), չորրորդը՝ Թելլին (21 հարկատու, 9 տուն), հինգերորդը՝ Վելեդ քենդին (18 հարկատու, 10 տուն), իսկ մնացյալ գյուղերի հարկատուների թիվը շատ ավելի քիչ էր:*

*Վարթանան) բնակավայրերը, գրանցված են Փամբակ գավառի հարկացուցակի առաջին էջերում[9]՝ համապատասխան գրություններով:*

*Գավառի բնակավայրերի թվաքանակի վերաբերյալ կարևոր տեղեկություններ կան արքայազն Վախուշտիի կազմած քարտեզում, ըստ որի՝ դրանք եղել են 50-ից ավելի: Բացի այդ, քարտեզում տեղ գտած բնակավայրերի անունների մի մասն է միայն, որ համապատասխանում է Տաշիրի 1728 թ. օսմանյան հարկացուցակի գյուղերին: Դրանք են՝ Քըզըլ Ջիյարեթ, Աղզը Բյույուք, Քարաքիլիսե, Շիշ Թեփե, Թելլի, Հայդար Բեյ, Դուլբենդլու, Միսխանա, Յաղուբ, Քամիշ, Քարաքալա, Քարա Բուլլաք, Սարիքալա գյուղերը:*

*Առաջին իրողությունը կարելի է բացատրել նախ նրանով, որ օսմանյան տիրապետության տակ անցնելուց հետո Տաշիրում տեղի է ունեցել սահմանների փոփոխություն[10], և խնդրո առարկա հարկացուցակում չնշված գյուղերն այլ գավառի կամ շրջանի մաս են կազմել: Սակայն ավելի հավանական է թվում այն տեսակետը, ըստ որի՝ դրանք եղել են այն բնակավայրերը, որոնք օսմանցիների գալուց կամ հիմնովին ավերվել են, կամ էլ այնքան աննշան նշանակություն են սկսել ունենալ, որ իշխանությունները հարկ չեն համարել դրանք գրանցել: Ինչ վերաբերում է 1728 թ. հարկացուցակի և քարտեզում տեղ գտած միայն որոշ գյուղերի անունների համապատասխանությանը, ապա, ամենայն հավանականությամբ, օսմանյան իշխանությունները գավառի մնացյալ գյուղերում կատարել են անվանափոխություն:*

*Ուսումնասիրելով հարկացուցակում արձանագրված մարդկանց անունները՝ նկատում ենք, որ գավառի բնակչությունը հայազգի է: Բացառություն էին Աջթաշ (2 մահմեդական, 14 "այլադավան"[11]) և Փամբակ գավառի աշխարհագրում տեղ գտած Հակոբլու (15 "այլադավան", 1 մահմեդական[12]) գյուղերը: Աջթաշ գյուղի մահմեդականները, դատելով անվան դիմացի գրությունից, եղել են Լոռվա բերդի զինվորներ:*

*Հարկացուցակի հաջորդ ուշագրավ հատվածը վերաբերում է գյուղերից գանձվող հարկերին: Նյութի քննությունը ցույց է տալիս, որ հարկերի ճնշող մեծամասնությունը գանձվել է յուրաքանչյուր գյուղից, իսկ մնացածները՝ ըստ տվյալ գյուղի տնտեսության հնարավորությունների:*

*Ամեն գյուղում իսփենջից[13], ցորենից, գարուց, աշորայից, կորեկի բերքից, յուղից, անասնապահությունից (ոչխար[14] և խոզ), խոտից, փեթակից[15] տրվող հարկերից*

---

[9] *1728* წლის თბილისის კილაიეთის დიდი დავთარი, *h. 2, էջ 665:*

[10] *Այս պահին մեր ձեռքի տակ չունենք սահմաններին վերաբերող օսմանյան շրջանի որևէ տեղեկություն:*

[11] *Օսմաներենում՝* "كبران"*– "գյաբռան" եզրույթը վերաբերում է ոչ մահմեդական բնակչությանը:*

[12] *Յաղուբլու գյուղի միակ մահմեդականը Վելիի որդի Թիմուրն էր:*

[13] *Գանձվել է միայն ոչ մահմեդական չափահաս տղամարդկանցից:*

*զատ, տուրքեր էին սահմանված նաև դաշտապահության[16] և հողի թափուի[17], հարսնության համար: Ոչ մշտական բնույթ ունեին ձիթհանի, կալված ցորենի ու բադիավայի[18], հանցանքի և ոճրի, բացակայող, կորած ապրանքների, ընդհանուրի ու խասսի[19] բեյթ-ուլ մալի[20] դիմաց գանձվող հարկերը:*

*Դատելով հարկատեսակների փողային արժեքից՝ որոշ հարկադրույքներ ունեցել են իրենց հստակ սահմանված չափը: Այսպես՝ իսփենջի դիմաց յուրաքանչյուր հարկատուից գանձվել է 120 աքչե[21], ցորենի ու գարու ամեն քիլեից[22]՝ հիմնականում համապատասխանաբար՝ 20 և 15 աքչե: 15 աքչե է նաև գանձվել աշորայի և կորեկի ամեն քիլեի համար, իսկ հարսնության հարկի համար սահմանված էր 120 աքչե: Ինչ վերաբերում է մնացյալ հարկատեսակներին, ապա դրանց փողային արժեքը փոփոխական էր:*

*Կարևոր է փաստել, որ Տաշիր գավառի բնակեցված 5 գյուղից (Դերգեր քենդի, Շիշ Թեփե, Սիրմեբադ, Քըզըլքիլիսե, Միսխանա) գանձվող հարկատեսակները թվարկված են կողք կողքի և այնուհետև նշվում է հարկաչափի ընդհանուր գումարը: Խնդիրն այն է, որ այդ իրողությունը հնարավորություն չի տալիս պարզելու յուրաքանչյուր հարկատեսակից գանձվող դրամի չափը: Գուցե դա կարելի է բացատրել նրանով, որ իշխանությունները, տնտեսությունը բավարար մակարդակի չհամարելով, հարկերից գանձվող ընդհանուր գումարը ստիպված են եղել գրանցել միջինացված ձևով:*

*Աշխարհագրի վերջին հատվածներից տեղեկանում ենք, որ գավառին պատկանող յայլաքներից[23] 120000 աքչե էր սահմանված:*

---

[14] *Բացառությամբ Աղզը Բյույուք գյուղից:*

[15] *Բացառությամբ Քաթերլի և Քըզըլ Ջիյարեթ գյուղերից:*

[16] *Դաշտերի պահպանության համար հարկ: Այս հարկը՝ որպես տուգանք, գանձվում էր այն ժամանակ, երբ գյուղացու անասունը մտներ որևէ այլ տարածք և վնաս պատճառեր:*

[17] *Հողաբաժին ունենալու իրավունք:*

[18] *Օսմանցի ֆեոդալները կատարված իրավախախտումների, կորած անասունների համար տուգանում էին հպատակներին:*

[19] *Խոսքը վերաբերում է մասնավոր սեփականությանը:*

[20] *Անժառանգ հանգուցյալների կալվածքներն ու ինչքերը կառավարող և պահպանող վարչություն, գանձարան: Հանգուցյալի մահից հետո 3 ամսվա ընթացքում ժառանգորդի ի հայտ չգալու պարագայում ունեցվածքը փոխանցվում էր գանձարան, իսկ եթե ժառանգորդը ներկայանար փոխանցումից հետո և ապացուցեր իր ժառանգ լինելու փաստը, ապա նա իրավունք ուներ տիրանալու հանգուցյալի ինչքին:*

[21] *Արծաթե դրամի միավոր: Օսմաներեն նշանակում է սպիտակավուն: Օսմանյան աքչեները հավասար էին մեկ քառորդ դիրհեմ արծաթի, իսկ դիրհեմը հավասար էր 3.06 գրամի:*

[22] *Չափման միավոր, որը տարբեր է եղել ըստ ժամանակաշրջանի:*

[23] *Արոտավայր:*

*Այսպիսով, խնդրո առարկա հարկացուցակն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Տաշիր գավառի էթնիկ պատկերի վերաբերյալ, հնարավորություն է տալիս վերհանել գավառի սոցիալ-տնտեսական դրությունը՝ բնակեցվածությունն ըստ գյուղերի, տեղեկանալ դրանցից գանձվող հարկաչափերին:*

## ОБЛАСТЬ ТАШИР В ОСМАНСКОМ НАЛОГОВОМ РЕЕСТРЕ 1728 Г.

ГЕОРГИЙ МИРЗАБЕКЯН

Р е з ю м е

Османский налоговый реестр области Ташир – очень важный источник для исследования демографических и социально-политических вопросов региона. Перепись области предоставляет данные об ее этническом составе, топонимике, количестве сел, взимаемых налогах и т. д. В 1728 г. в области Ташир насчитывалось 46 сел, из которых 29 не были заселены. Население сел составляли исключительно армяне. Жители области платили османским властям различные налоги, большая часть которых собиралась с каждого села.

## THE TASHIR PROVINCE IN THE 1728 OTTOMAN TAX REGISTER

GEORGI MIRZABEKYAN

S u m m a r y

The Ottoman tax register of the Tashir province is a very important source from the aspect of demography and socio-economic issues of the region. The tax register of the province gives a large opportunity to research the ethnic composition, names of villages of the province, their quantity, collected taxes, etc. In 1728 the tax register from Tashir contained a list of 46 villages including 29 uninhabited ones. The population in villages were exclusively Armenians. The population of Tashir province paid different taxes to the Ottoman authorities, mostly collected from every settlement.